ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/53

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Բողոք բերող՝ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կենցաղային ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 16.04.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

կամ

2. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» բաժնում կատարել համապատասխան փոփոխություններ՝ Հրավերը համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 16.04.2020թ.-ին:

17.04.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/53 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.05.2020թ.-ին:

2. «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն 16.04.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ <<Կենցաղային ապրանքների>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Սույն ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2020թ. ապրիլի 17-ը, ժամը 11:00-ն:

Ընթացակարգի գնման առարկա է հանդիսանում ՀՀ Ոստիկանության կարիքների համար՝ կենցաղային ապրանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են 7 չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	***Չափաբաժնի անվանումը***
1	*թեյնիկ*
2	*օդորակիչ,12000 BTU*
3	*օդորակիչ, 9000 BTU*
4	*օդորակիչ, 9000 BTU*

5	հանրային հեռախոսներ
6	փոքր էլեկտրական կամ գազային սալիկներ
7	միկրոալիքային վառարաններ

Համաձայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 2, 3 և 4 չափաբաժինների մասով սահմանվել է կենցաղային ապրանքների հետևյալ տեխնիկական բնութագիր՝

2 չափաբաժին - Օդորակիչ HISENSE 12UW4SVETG10 12000 BTU կամ համարժեքը: Տեսակը՝ Invertor պատից կախովի սպլիտ համակարգ: Կառավարումը՝ հեռակառավարման վահանակ, թայմեր, i-feel համակարգ/հանձնարարված ջերմաստիճանի ճշգրիտ ապահովում, ածխային ֆիլտր՝ օդի ֆիլտրացման համար, աշխատանքային ջերմաստիճանը +43C° աստիճանից -15 C°, ներքին ընդհանուր՝ ներքին բլոկի ձայնի մակարդակը 39 դցբ,բայց ոչ ավել: Հովացման գազի տեսակը՝ R 410A, միաֆազ, հովհարի արագության կարգավորում, օդի ուղղությունը փոխելու հնարավորություն, սառույցի հալման ռեժիմ: Աշխատանքային ռեժիմը՝ հիմնական ռեժիմը հովացում/տաքացում, հովհարի լրացուցիչ ռեժիմ, ավտոմատ գոլորշիացման ռեժիմ, չորացման ռեժիմ, օդի առավելագույն հոսքը 600մ³/ժ: Հզորությունը հովացման ռեժիմում՝ նվազագույնը 1060 Վտ: Հզորությունը տաքացման ռեժիմում՝ նվազագույնը 1025 Վտ: Փոփոխական հոսանքի սնուցումը՝ 220-240Վ, 50-60Հց: էլեկտրական հոսանքին (համաշխարհային չափանիշներին համապատասխան C,F խրոցներով) միացվող համապահասխան լար:

Ներառյալ տեղադրումն ծառայությունը (սարքերը, սարքավորումները, գործածվող նյութերը և վերամբարձիչը՝ անկախ ցանկացած տարածությունից):

Մեկ տարվա երաշխիքային սպասարկում:

Բեռնաբարձումը, առաքումը, տեղափոխումը (պահանջված հասցեով) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին (սույն պարբերությունում շարադրված պարտադիր պահանջները վերաբերվում է նաև երաշխիքային սպասարկման դեպքերին):

3-րդ չափաբաժին - Օդորակիչ HISENSE 09UW4SVETG10 9000 BTU կամ համարժեքը: Տեսակը՝ Invertor պատից կախովի սպլիտ համակարգ: Կառավարումը՝ հեռակառավարման վահանակ, թայմեր, լուսադիոդային էկրան, i-feel համակարգ/հանձնարարված ջերմաստիճանի ճշգրիտ ապահովում, ածխային ֆիլտր՝ օդի ֆիլտրացման համար, աշխատանքային ջերմաստիճանը +43 C° աստիճանից -15 C°, ընդհանուր՝ ներքին բլոկի ձայնի մակարդակը 56 դցբ, բայց ոչ ավել: Հովացման գազի

տեսակը՝ R 410A, միաֆազ, հովհարի արագության կարգավորում, հեռակառավարման վահանակով օդի ուղղությունը փոխելու հնարավորություն՝ թևիկների կառավարումով, սառույցի հալման ռեժիմ: Աշխատանքային ռեժիմը՝ հիմնական ռեժիմը հովացում/տաքացում, հովհարի լրացուցիչ ռեժիմ, ավտոմատ գոլորշիացման ռեժիմ, չորացման ռեժիմ, օդի առավելագույն հոսքը 500 մ³/ժ: Հզորությունը հովացման ռեժիմում՝ նվազագույնը 765 Վտ: Հզորությունը տաքացման ռեժիմում՝ նվազագույնը 715Վտ: Փոփոխական հոսանքի սնուցումը՝ 220-240Վ, 50-60Հց: էլեկտրական հոսանքին (համաշխարհային չափանիշներին համապատասխան C,F խրոցներով) միացվող համապահասխան լար:

Ներառյալ տեղադրման ծառայությունը (սարքերը, սարքավորումները, գործածվող նյութերը և վերամբարձիչը՝ անկախ ցանկացած տարածությունից):

Մեկ տարվա երաշխիքային սպասարկում:

Բեռնաբարձումը, առաքումը, տեղափոխումը (պահանջված հասցեով) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին (սույն պարբերությունում շարադրված պարտադիր պահանջները վերաբերվում է նաև երաշխիքային սպասարկման դեպքերին):

4-րդ չափաբաժին - Հեռուստացույց HISENSE 32N2170HW կամ համարժեք: Հեռուստացույց՝ տեսակը LED, անկյունագիծը 81սմ/32", սմարթ, ինտերնետին միանալու հնարավորություն, էկրանի ֆորմատ առնվազն 16:9:

Կետայնությունը առնվազն 1366*768HD, WI-FI և լարային մոդուլ, ներկառուցված DVB-T, DVB-T2, DVB-S2 ընդունելի ֆորմատներ՝ AVI, WMV, ASF, MP4, MOV, 3GP, MKV, MPG, MPEG, VOB, RM, WebM, VRO, OGM, FLV, H.264, MPEG4, MPEG2, DIVX, VP8, VC1, MVC հեռուստաալիքների երկու ընդունիչ՝ անալոգային և թվային, պայծառությունը՝ առնվազն 180 կանդել/քմ, գույնը սև, ինտերնետային ծրագիր առնվազն VIDAA Lite 2.0, պատկերի հակադրություն առնվազն 1200:1, բյուրեղի արձագանքման արագություն առնվազն 8մվրկ, դիտման անկյուն առնվազն 176°, երկմիջուկ պրոցեսոր MSD6486XTAT, պատկերի բարելավման հաճախականություն 50Հց ձայնային համակարգ՝ ներդրված առնվազն 2 բարձրախոսներով, ձայնի ուժգնությունը՝ առնվազն 2x8վտ, ձայնի ինքնակարգավորման համակարգ, հնչողության կարգավորում:

Մուտքեր առնվազն USBx2, HDMIx3, AV, կոմպոնենտային,թվային, ալեհավաքային, CI Slot, LAN:

Լրացուցիչ գործառույթներ՝ թայմեր, ծնողական վերահսկում, նախընտրելի ալիքների հավաքագրում, ծրագրերի ավտոմատ թարմացման համակարգ,

Չափերը փակդիրով առնվազն 734x474x171մմ, առանց փակդիրի առնվազն 734x434x93մմ:

Լրակազմ հեռուստացույց, հեռակառավարման վահանակ, հոսանքի մալուխ:

Փոփոխական հոսանքի սնուցումը՝ 220-240Վ, 50-60Հց: էլեկտրական հոսանքին (համաշխարհային չափանիշներին համապատասխան C,F խրոցներով) միացվող համապահասխան լար:

Երաշխիքային սպասարկումը մեկ տարի:

Բեռնաբարձումը, առաքումը, տեղափոխումը (պահանջված հասցեով) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին (սույն պարբերությունում շարադրված պարտադիր պահանջները վերաբերվում է նաև երաշխիքային սպասարկման դեպքերին):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Գտնում ենք, որ <<ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սույն ընթացակարգի հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտում, մասնավորապես.

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնի՝ կենցաղային ապրանքների ձեռքբերման տեխնիկական բնութագրով պահանջվել է՝

2-րդ չափաբաժին - Օդորակիչ HISENSE 12UW4SVETG10 12000 BTU կամ համարժեք,

3-րդ չափաբաժին - Օդորակիչ HISENSE 09UW4SVETG10 9000 BTU կամ համարժեք,

4-րդ չափաբաժին - Հեռուստացույց HISENSE 32N2170HW կամ համարժեք:

Այսպես.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ օրինակ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնի մասով պահանջվում է կենցաղային ապրանքների այնպիսի բնութագիր, մասնավորապես հղում կատարելով կոնկրետ բրենդի և կոնկրետ բրենդի մոդելի, որը ուղղակի ստեղծում անհավասար պայմաններ այլ Ընկերությունների համար, քանի որ եթե առկա է հղում բրենդի մոդելին, ապա այլևս անհնար է ներկայացնել դրան համարժեք ապրանք և վերոհիշյալ հանգամանքը թույլ է տալիս կարծելու, որ Ընթացակարգի հրավերում ներառված են խտրական պահանջներ:

Նույնատիպ խնդրի առաջ ենք կանգնում նաև, երբ ուսումնասիրում ենք «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնի՝ 3 և 4 չափաբաժինները նույնպես:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ Հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ը՝ պետք է վերանայվեն և համապատասխանեցվեն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է հրավերում փոփոխություններ կատարելու հնարավորությունը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է

1. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

կամ

2. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» բաժնում կատարել համապատասխան փոփոխություններ՝ Հրավերը համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ի լրումն ներկայացված բողոքի, Ընկերություն հավելյալ հայտնել է նաև հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել ենք 16.04.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/53 բողոքով, ՀՀ ոստիկանության կարիքների համար՝<<Կենցաղային ապրանքների>> ձեռքբերման նպատակով հայտարարվել է <<ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46>> ծածկագրով գնանշման հարցման ընթա-ցա¬կարգ, որի գնման առարկա է հանդիսանում ՀՀ Ոստիկանության կարիքների համար՝ կենցաղային ապրանքների ձեռքբերումը, որոնք խմբավորված են 7 չափաբաժնում:

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից վիճարկվող 2, 3 և 4 չափաբաժինների մասով սահմանվել է կենցաղային ապրանքների այնպիսի տեխնիկական բնութագրեր, որը ուղղակի հնարավորություն չի ընձեռում այլ մասնակիցներին հայտ ներկայացնելու՝ բացի տեխնիկական բնութագրով նախատեսված HISENSE մոդելի ՀՀ-ում գործող բացառիկ ներկայացուցչի:

Մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնով նախատեսվել է - օդորակիչ HISENSE 12UW4SVETG10 12000 BTU կամ համարժեք, 3-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է - օդորակիչ HISENSE 09UW4SVETG10 9000 BTU կամ համարժեք, 4-րդ չափաբանի մասով նախատեսվել է - հեռուստացույց HISENSE 32N2170HW կամ համարժեք:

Վերը նշված մոդելները նույն տնտեսական ոլորտում՝ այն էլ նույն տեխնիկական բնութագրով՝ համարժեք չունեն, վերը նշված փաստի առթիվ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից հավաքագրվել են ապացույցներ, որոնց անրադառնանք ըստ հերթականության, և այսպես՝

• 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսվել է i-feel համակարգ/հանձնարարված ջերմաստիճանի ճշգրիտ ապահովում, մինչդեռ ջերմաստիճանի ճշգրիտ ապահովման հանձնարարված/համակարգ բազմաթիվ են, սակայն i-feel ապահովումը կիրառվում է միայն HISENSE բրենդում և առկա չէ որևէ տեսակի համարժեք, որպես օրինակ նշենք որ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող բրենդի վերը նշված ջերմաստիճանի ճշգրիտ ապահովման հանձնարարված/համակարգը Follow Me է, բայց քանի որ հրավերով պահանջվել է i-feel ապահովումը՝ ուստի «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն հայտ չի ներկայացրել:

• 4 չափաբաժնի մասով նախատեսվել է հեռուստացույց HISENSE 32N2170HW կամ համարժեք, որտեղ ինտերնետային ծրագիրը պետք է լինի առնվազն VIDAA Lite 2.0, միչդեռ VIDAA Lite 2.0 ինտերնետային ծրագիրը HISENSE բրենդի կողմից առաջարկվող և կիրառվող ծրագիր է, որի համարժեքը գոյություն չունի, նորից բերենք օրինակ առ այն, որ շուկայում առկա են նորագույն ինտերնետային ծրագրեր պարունակող հեռուստացույցներ՝ տարբեր ինտերնետային ծրագրերով, բայց հաշվի առնելով, որ հրավերով պահանջվել է VIDAA Lite 2.0 ինտերնետային ծրագիրը, ուստի նորից «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն հայտ չի ներկայացրել, քանի որ Պատվիրատուն հղում կատարելով կոնկրետ բրենդի կոնկրետ մոդելին կամ պահանջելով այդ նույն մոդելի համարժեքը՝ ստեղծում է անհավասար պայմաններ մասնակիցների միջև, քանի որ մատնանշված մոդելի համարժեք ուղղակի գոյություն չունի /հղումը այստեղ՝ http://www.hisenseltd.ru/production/?id=6/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Մինչդեռ համաձայն՝ <<ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏԿ-2020/Ա-46>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի սահմանվել է այնպիսի ոչ մրցակցային և ոչ համաչափ պայմաններ, որը հնարավորություն է տալիս մրցակցային անհավասար պայմաններ ստեղծել HISENSE մոդելի ՀՀ-ում գործող բացառիկ ներկայացուցչի և մյուս տնտեսական նույն խմբում գործունեություն ծավալող ընկերությունների:

Կասկածից վեր է, որ <<ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏԿ-2020/Ա-46>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սույն ընթացակարգի հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտում:

Վերոհիշյալի արդյունքում սահմանափակվում է մրցակցությունը, որի արդյունքում պետությունը կզրկվի հնարավորությունից իրականացնել տնտեսող ձեռքբերում, ինչն էլ վնաս կարող է պատճառել պետական բյուջեին և հանգեցնել պետական բյուջեի միջոցների ոչ ռացիոնալ օգտագործմանը:»:

Ելնելով վերը նշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել են «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/53 բողոքը բավարարել:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.04.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/5735-2020 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 30.04.2020թ.-ին թիվ Մ-16631-2020 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2020 թվականին ներկայացվել է բողոք «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏԿ-2020/Ա-46» ծածկագրով գնանշման հարցման /այսուհետ՝ ընթացակարգ/ վերաբերյալ, որտեղ բողոքաբերը ցանկություն է հայտնել պարտավորեցնելու ՀՀ ոստիկանությանը չկայացած հայտարարել վերը նշված ընթացակարգը կամ փոփոխել 2,3,4 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը:

Բողոքի վերաբերյալ կհայտնեմ հետևյալը.

Կարծում եմ, որ ՀՀ ոստիկանության կողմից չի թույլատրվել Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2- րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի խախտում, քանի որ գնման առարկաների տեխնիկական բնութագրերը գրելիս հիմք են ընդունվել նախորդ տարիներին տարբեր կազմակերպությունների կողմից մատարարարված ապրանքներից լավագույնների տեխնիկական բնութագրերը և, պահանջներն ու պարամետրերը նշվել են այնպես, որ ցանկացած մատակարար կարող էր մասնակցել մրցույթին և առաջարկել համարժեք ապրանքանիշ:

Որպես վերոգրյալի ապացույց Ձեզ եմ ներկայացնում հենց այս մրցույթի մասնակիցների գնային առաջարկները և հայտերի բացման նիստի արձանագրությունը, որից պարզ է դառնում, որ տվյալ ընթացակարգի 4-րդ չափաբաժնին մասնակցել է նաև էլմարկետ ՍՊԸ-ն, որն առաջարկել է նվազագույն գնային առաջարկ և համարժեք ապրանք, ինչը գնահատվել է հրավերի պահանջներին բավարար: Այստեղից կարելի է անել եզրակացություն, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտում տեղի չի ունեցել: /Հայտերի բացման նիստի արձանագրությունը և մասնակիցների կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրերը կցվում են/

Բացի դա, Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի որ, «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020թ.-ին կատարվել են պարզաբանման հարցումներ բողոքի առարկա դարձած չափաբաժինների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունների վերաբերյալ, ինչից կարելի է եզրակացնել, որ տվյալ կազմակերպությունը ունեցել է HISENSE ֆիրմայի նմանատիպը հանդիսացող ապրանքներ, սակայն չի մասնակցել մրցույթին և բողոքարկել է այն:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության կողմից կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով 08.04.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 17.04.2020թ.-ին:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

2-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«օդորակիչ, 12000 BTU»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Օդորակիչ HISENSE 12UW4SVETG10 12000 BTU կամ համարժեքը: Տեսակը՝ Invertor պատից կախովի սպլիտ համակարգ: Կառավարումը՝ հեռակառավարման վահանակ, թայմեր, i-feel համակարգ/հանձնարարված ջերմաստիճանի ճշգրիտ ապահովում, ածխային ֆիլտր՝ օդի ֆիլտրացման համար, աշխատանքային ջերմաստիճանը +43C° աստիճանից -15 C°, ներքին ընդհանուր՝ ներքին բլոկի ձայնի մակարդակը 39 դցբ,բայց ոչ ավել: Հովացման գազի տեսակը՝ R 410A, միաֆազ, հովհարի արագության կարգավորում, օդի ուղղությունը փոխելու հնարավորություն, սառույցի հալման ռեժիմ: Աշխատանքային ռեժիմը՝ հիմնական ռեժիմը հովացում/տաքացում, հովհարի լրացուցիչ ռեժիմ, ավտոմատ գոլորշիացման ռեժիմ, չորացման ռեժիմ, օդի առավելագույն հոսքը 600մ³/ժ: Հզորությունը հովացման ռեժիմում՝ նվազագույնը 1060 Վտ: Հզորությունը տաքացման ռեժիմում՝ նվազագույնը 1025 Վտ: Փոփոխական հոսանքի սնուցումը՝ 220-240Վ, 50-60Հց: էլեկտրական հոսանքին (համաշխարհային չափանիշներին համապատասխան C,F խրոցներով) միացվող համապահասխան լար:»:*

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանող ապրանքի ամբողջական նկարագրով՝ Հավելված 1.1-ով, «Վիէլվի Սենթր» ՍՊԸ-ն առաջարկել է հետևյալը.

Հավելված 1.1-ով ապրանքի անվանումը և ապրանքային նշանը՝ *«VIKASS»*, իսկ համաձայն տեխնիկական բնութագրի՝ *«Օդորակիչ 12000 BTU: Տեսակը՝ Invertor պատից կախովի սպլիտ համակարգ: Կառավարումը՝ հեռակառավարման վահանակ, թայմեր, i-feel համակարգ/հանձնարարված ջերմաստիճանի ճշգրիտ ապահովում, ածխային ֆիլտր օդի ֆիլտրացման համար, աշխատանքային ջերմաստիճանը +43C0 աստիճանից -15 C°, ներքին ընդհանուր՝ ներքին բլոկի ձայնի մակարդակը 38 դցբ,: Հովացման գազի տեսակը՝ R 410A, միաֆազ, հովհարի արագության կարգավորում, օդի ուղղությունը փոխելու հնարավորություն, սառույցի հալման ռեժիմ: Աշխատանքային ռեժիմը՝ հիմնական ռեժիմը հովացում/տաքացում, հովհարի լրացուցիչ ռեժիմ, ավտոմատ գոլորշիացման ռեժիմ, չորացման ռեժիմ, օդի հոսքը 600մ3/ժ: Հզորությունը հովացման ռեժիմում՝ 1060 Վտ: Հզորությունը տաքացման ռեժիմում 1025 Վտ: սառեցում՝ արտադրողականություն 3500W, և ջեռուցում՝ արտադրողականություն 3900W Փոփոխական հոսանքի սնուցումը՝ 220-240Վ,*

50-60Հց: Էլեկտրական հոսանքին (համաշխարհային չափանիշներին համապատասխան C,F խրոցներով) միացվող համապահասխան լար:»:

3-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«օդորակիչ, 9000 BTU»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «*Օդորակիչ HISENSE 09UW4SVETG10 9000 BTU կամ համարժեքը: Տեսակը՝ Invertor պատից կախովի սպլիտ համակարգ: Կառավարումը՝ հեռակառավարման վահանակ, թայմեր, լուսադիոդային էկրան, i-feel համակարգ/հանձնարարված ջերմաստիճանի ճշգրիտ ապահովում, ածխային ֆիլտր՝ օդի ֆիլտրացման համար, աշխատանքային ջերմաստիճանը +43 C° աստիճանից -15 C°, ընդհանուր՝ ներքին բլոկի ձայնի մակարդակը 56 դցբ, բայց ոչ ավել: Հովացման գազի տեսակը՝ R 410A, միաֆազ, հովհարի արագության կարգավորում, հեռակառավարման վահանակով օդի ուղղությունը փոխելու հնարավորություն՝ թևիկների կառավարումով, սառույցի հալման ռեժիմ: Աշխատանքային ռեժիմը՝ հիմնական ռեժիմը հովացում/տաքացում, հովհարի լրացուցիչ ռեժիմ, ավտոմատ գոլորշիացման ռեժիմ, չորացման ռեժիմ, օդի առավելագույն հոսքը 500 մ³/ժ : Հզորությունը հովացման ռեժիմում՝ նվազագույնը 765 Վտ: Հզորությունը տաքացման ռեժիմում՝ նվազագույնը 715Վտ: Փոփոխական հոսանքի սնուցումը՝ 220-240Վ, 50-60Հց: էլեկտրական հոսանքին (համաշխարհային չափանիշներին համապատասխան C,F խրոցներով) միացվող համապահասխան լար:»:*

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանող արտադրողների անվանումներ Պատվիրատուի կողմից բողոքի քննության ընթացքում չներկայացվեցին:

4-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«օդորակիչ, 9000 BTU»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Հեռուստացույց HISENSE 32N2170HW կամ համարժեք: Հեռուստացույց՝ տեսակը LED, անկյունագիծը 81սմ/32", սմարթ, ինտերնետին միանալու հնարավորություն, էկրանի ֆորմատ առնվազն 16:9: Կետայնությունը առնվազն 1366*768HD, WI-FI և լարային մոդուլ, ներկառուցված DVB-T, DVB-T2, DVB-S2 ընդունելի ֆորմատներ՝ AVI, WMV, ASF, MP4, MOV, 3GP, MKV, MPG, MPEG, VOB, RM, WebM, VRO, OGM, FLV, H.264, MPEG4, MPEG2, DIVX, VP8, VC1, MVC հեռուստաալիքների երկու ընդունիչ՝ անալոգային և թվային, պայծառությունը՝ առնվազն 180 կանդել/քմ, գույնը սև, ինտերնետային ծրագիր առնվազն VIDAA Lite 2.0, պատկերի հակադրություն առնվազն 1200:1, բյուրեղի արձագանքման արագություն առնվազն 8մվրկ, դիտման անկյուն առնվազն 176°, երկմիջուկ պրոցեսոր MSD6486XTAT, պատկերի բարելավման հաճախականություն 50Հց ձայնային համակարգ՝*

ներդրված առնվազն 2 բարձրախոսներով, ձայնի ուժգնությունը՝ առնվազն 2x8վտ, ձայնի ինքնակարգավորման համակարգ, հնչողության կարգավորում: Մուտքեր առնվազն USBx2, HDMIx3, AV, կոմպոնենտային,թվային, ալեհավաքային, CI Slot, LAN: Լրացուցիչ գործառույթներ՝ թայմեր, ծնողական վերահսկում, նախընտրելի ալիքների հավաքագրում, ծրագրերի ավտոմատ թարմացման համակարգ, Չափերը տակդիրով առնվազն 734x474x171մմ, առանց տակդիրի առնվազն 734x434x93մմ: Լրակազմ հեռուստացույց, հեռակառավարման վահանակ, հոսանքի մալուխ: Փոփոխական հոսանքի սնուցումը՝ 220-240Վ, 50-60Հg: Էլեկտրական հոսանքին (համաշխարհային չափանիշներին համապատասխան C,F խրոցներով) միացվող համապահասխան լար:»:

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանող ապրանքի ամբողջական նկարագրով՝ Հավելված 1.1-ով, «Էլմարկետ» ՍՊԸ-ն առաջարկել է հետևյալը.

Հավելված 1.1-ով ապրանքի անվանումը և ապրանքային նշանը՝ *«BBK»*, իսկ համաձայն տեխնիկական բնութագրի՝ *«Հեռուստացույց BBK 32I_EX-7127Д52C/5MAPT: Հեռուստացույց' տեսակը LED, անկյունագիծը 81 սմ/32", սմարթ, ինտերնետին միանալու հնարավորություն, էկրանի ֆորմատ առնվազն 16:9: Կետայնությունը 1366*768 HD Ready, WI-FI և լարային մոդուլ, ներկառուցված DVB-T, DVB-T2, DVB-S2 ընդունելի ֆորմատներ' AVI, WMV, ASF, MP4, MOV, 3GP, MKV, MPG, MPEG, VOB, RM, WebM, VRO, OGM, FLV, H.264, MPEG4, MPEG2, DIVX, VP8, VC1, MVC հեռատաալիքների երկու ընդունիչ' անալոգային և թվային, պայծառությունը' 250 կանդել/քմ, գույնը սև, ինտերնետային ծրագիր Android 7.1, պատկերի հակադրություն 3000:1, բյուրեղի արձագանքման արագություն 8,5 մվրկ, դիտման անկյուն 178°, երկմիջուկ պրոցեսոր MSD6486XTAT, պատկերի բարելավման հաճախականություն 50Հg ձայնային համակարգ' ներդրված 2 բարձրախոսներով, ձայնի ուժգնությունը' 2x8ֆտ, ձայնի ինքնակարգավորման համակարգ, հնչողության կարգավորում: Մուտքեր USBx2, EЮMIx3, AV, կոմպոնենտային,թվային, ալեհավաքային, CI Slot, LAN: Լրացուցիչ գործառույթներ' թայմեր, ծնողական վերահսկում, նախընտրելի ալիքների հավաքագրում, ծրագրերի ավտոմատ թարմացման համակարգ, Չափերը տակդիրով առնվազն 732x477x212մմ, առանց տակդիրի առնվազն 732x434x87մմ: Լրակազմ հեռուստացույց, հեռակառավարման վահանակ, հոսանքի մալուխ: Փոփոխական հոսանքի սնուցումը' 220-240Վ, 50-60Հg: Էլեկտրական հոսանքին (համաշխարհային չափանիշներին համապատասխան C,F խրոցներով) միացվող համապահասխան լար: Երաշխիքային սպասարկումը մեկ տարի:»:*

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ

օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ

է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ապրանքների գնման դեպքում հրավերով սահմանվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ՀՀ ոստիկանության կողմից կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով 08.04.2020թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 3-րդ չափաբաժնի մասով սահմանված պահանջները չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, սահմանափակում են ցանկացած անձի՝ գնման

գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը, հիմնված չեն գնման գործընթացի մրցակցային, համաչափ, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, որն էլ առաջացրել է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների:

Այսպես՝ Բողոքաբեր Ընկերության կողմից ներկայացված այն փաստերի վերաբերյալ, ըստ որոնց 3-րդ չափաբաժնով ներկայացված «օդորակիչ, 9000 BTU»-ի տեխնիկական բնութագիրը բնորոշ է միայն HISENSE 09UW4SVETG10 9000 BTU ֆիրմային ապրանքանշանին, Պատվիրատուի կողմից, ներկայացված բողոքի առարկություններով (դիրքորոշմամբ), չի ներկայացվել, որևէ վերաբերելի ապացույց, առ այն, որ չափորոշիչները համապատասխանում են առնվազն 2 արտադրողների բնութագրերին, այն որ բողոքի քննության առարկա հանդիսացող 3-րդ չափաբաժնի մասով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանում են այլ արտադրողների անվանումներ:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ

լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով գործով ներգրավված անձանց ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 3-րդ չափաբաժնի մասով սահմանված պահանջների Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածների դրույթներին համապատասխանության մասին որևէ վերաբերելի ապացույց, որ պահանջները ապահովում են մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար և որ սահմանված «օդորակիչ, 9000 BTU»-ի տեխնիկական բնութագիրը բնորոշ չէ միայն HISENSE 09UW4SVETG10 9000 BTU ֆիրմային ապրանքանշանին, Պատվիրատուի կողմից, ներկայացված բողոքի առարկություններով (դիրքորոշմամբ), չի ներկայացվել, որևէ վերաբերելի ապացույց, առ այն, որ չափորոշիչները համապատասխանում են առնվազն 2 արտադրողների բնութագրերին, այն որ բողոքի քննության առարկա հանդիսացող 3-րդ չափաբաժնի մասով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանում են այլ արտադրողների անվանումներ, որով հնարավոր կլիներ հերքել և բացառել բողոքաբերի կողմից բողոքով բերված փաստական հանգամանքները: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Պատվիրատուն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Անդրադառնալով Բողոքաբերի կողմից բողոքի լրացմամբ հրավերի 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ներկայացված փաստերին ու փաստարկներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այդ չափաբաժինների վերաբերյալ Պատվիրատուի կողմից գործի քննության ընթացքում ներկայացվեցին համապատասխան ապացույցներ, առ այն, որ 2-րդ և 4-րդ չափաբաժիններով պահանջված ապրանքատեսակների հրավերով

սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանում են նաև 2-րդ չափաբաժնի մասով «Վիէլվի Սենթր» ՍՊԸ-ի կողմից առաջարկված «VIKASS» և 4-րդ չափաբաժնի մասով «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված «BBK» ընկերությունների ապրանքատեսակները:

Ուստի, ելնելով վերագրյալներից, Բողոքներ քննող անձը գտնում է, որ բողոքով ներկայացված թիվ 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած համարելու պահանջն ենթակա է մերժման:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից բողոքով թիվ 3-րդ չափաբաժնի մասով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներն այդ չափաբաժնի մասով անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 3-րդ չափաբաժնի մասով թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ընթացակարգն այդ մասով պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/53 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԵՆՑ/ՏՎ-2020/Ա-46» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը՝ 3-րդ չափաբաժնի մասով:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**